«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Գայանե Թովմասյան
ՀՊՏՀ «ԱՄԲԵՐԴ» հետազոտական կենտրոնի հետազոտող,
ՀՀ ՊԿԱ Կառավարման ամբիոնի դասախոս, տ.գ.թ.
tovmasyangayane@yahoo.com

Ըստ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ԼՂՀ օրենքի՝ զբոսաշրջությունը ճանաչողական, հանգստի, առողջարարական, մարզական, կրոնական, ազգականներին այցելության, մասնագիտական, գործնական և այլ նպատակներով բնակության մշտական վայրից (երկրից) այլ վայր (երկիր) առավելագույնը մինչև մեկ տարի անընդմեջ ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների գործունեությունն է[1]:

Արցախում զբոսաշրջության զարգացման համար պատասխանատու մարմինը Արցախի Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության վարչությունն է: Զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներն են.

- Նպաստել միջազգային հանրության կողմից Արցախի ճանաչմանը զբոսաշրջության միջոցով,
- Արցախը վերածել զբոսաշրջային հայտնի ուղղության,
- մեծացնել զբոսաշրջության ներդրումը ազգային եկամտի ավելացման գործընթացում,
- խթանել զբոսաշրջության բնագավառում զբաղվածության ավելացմանը՝ հասնելով բնակչության կենսամակարդակի բարձրացմանը[2]:

Ըստ Արցախի արտաքին գործերի նախարարության տեղեկատվության՝ 2016թ. Արցախ են այցելել 13960 զբոսաշրջիկ 80 երկրներից, նախորդ տարվա 16589 զբոսաշրջիկի և 78 երկրների փոխարեն: Զբոսաշրջիկների թվաքանակը նախորդ տարվա համեմատ նվազել է 2629 մարդով կամ 15.8 տոկոսով: Զբոսաշրջիկների 44%-ը ժամանել է ՌԴ-ից, 11%-ը՝ ԱՄՆ-ից, 5.3%-ը՝ ԻԻՀ-ից, 4.7%-ը՝ Ֆրանսիայից, 2.7%-ը՝ Գերմանիայից, և այլն[3]: Կոռելացիոն վերլուծությունը (2009-2016թթ. տվյալների հիման վրա) ցույց է տվել, որ ներգնա զբոսաշրջիկների թվի և ՀՆԱ-ի միջև Պիրսոնի R գործակիցը 0.875 է, իսկ դետերմինացիայի

[1] «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 2, ընդունված 24 նոյեմբերի, 2004թ.
[2] Տուրիզմ, http://mineconomy.nkr.am/?page_id=583:
[3] ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ, էջ՝ 78, http://stat-nkr.am/files/publications/2016/doklad_2016_hunvar_dektember/4_3__michazgajin%20zbosashrchik.pdf

գործակիցը՝ R^2-ն՝ 0.766, այսինքն զբոսաշրջիկների թվի փոփոխության ազդեցությունը ՀՆԱ-ի փոփոխության վրա 76% է:

Աղյուսակ 1. Արցախ ժամանած զբոսաշրջիկների թիվը 2009-2016թթ.[1]

	2009	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*	*2015*	*2016*
Միջազգային զբոսաշրջիկներ	*5546*	*7924*	*11362*	*15559*	*16317*	*14375*	*16589*	*13960*
այդ թվում՝ ըստ նպատակի								
գործնական	*726*	*1022*	*1108*	*1404*	*843*	*893*	*1694*	*1162*
հանգստի և ժամանցի	*4763*	*6871*	*10222*	*14147*	*15470*	*13475*	*14861*	*12784*
կրթության	*6*	*3*	*20*	*8*	*4*	*7*	*4*	*14*
այլ	*49*	*28*	*12*	*-*	*-*	*-*	*-*	*-*

Զբոսաշրջային ոլորտում մարքեթինգային քաղաքականությունը հիմնականում երեք ուղղությամբ է իրականացվում. համացանցի միջոցով, Արցախի զբոսաշրջային արդյունքը միջազգային հեղինակավոր տուրիստական ցուցահանդեսներում ներկայացմամբ և բազմալեզու տպագիր տեղեկատվական գրականության հրապարակմամբ ու տարածմամբ: 2010 թվականից գործում է karabakh.travel վեբկայքը՝ գրեթե բոլոր հայտնի սոցիալական ցանցերում պաշտոնական էջերով: 2014թ. Արցախի զբոսաշրջային արդյունքը ներկայացվել է Մադրիդի «Fitur 2014», Փարիզի «Top Resa 2014», Ռիմինիի «TTG Incontri Fiera Rimini 2014», Լոնդոնի «WTM 2014» միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներին: 2014թ. կազմակերպվել են ճանաչողական այցեր օտարերկրյա լրագրողների և տուրօպերատորների համար: Արցախում գործում են նաև զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններ Ստեփանակերտ և Շուշի քաղաքներում, ինչպես նաև «Տիգրանակերտ» պետական պատմամշակութային արգելոցում և Նիկոլ Դումանի տուն-թանգարանում[2]: 2015թ. Արցախը չի մասնակցել եվրոպական երկրներում կազմակերպվող միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին, այլ մասնակցել է ՀՀ-ում «Ինտուր էքպո 2015», «Արտադրված է Հայաստանում», «Երկրները մեկ հարկի տակ» ցուցահանդեսներին և «Արենի» գինու փառատոնին: 2015թ. Արցախում կազմակերպվել է «Թթի փառատոն» և «Արցախյան գինու» երկրորդ փառատոնը[3]:

Զբոսաշրջությունից ստացված ֆինանսական մուտքերն ու ելքերն արտացոլվում են վճարային հաշվեկշռում: Արցախի վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի ապրանքների և ծառայությունների արտահանում և ներմուծում ենթահաշվի ճանապարհորդության բաժինը 2016թ. գնահատվել է -3476,8 հազար դոլար (կրեդիտ՝ 2271,6 հազար դոլար, դեբետ՝ 5748,4 հազար դոլար): Զբոսաշրջային ծառայությունների դեբետի մեծ թիվը կրեդիտից նշանակում է, որ մեր արտագնա զբոսաշրջիկներն ավելի շատ գումար են ծախսում դրսում, քան ներգնա զբոսաշրջիկները Արցախում՝ ապրանքների և ծառայությունների վրա:

---

[1] Աղբյուրը՝ ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009-2016թթ. հրապարակումներ, http://stat-nkr.am/files/yearbooks/2009-2015/25_arev%20ev%20carayut_224-234.pdf:

[2] Տուրիզմ, http://mineconomy.nkr.am/?page_id=583:

[3] ԼՂՀ Կառավարության 2016թ. մարտի 10-ի N 92-Ա որոշում «ԼՂՀ 2016թ. զբոսաշրջության ոլորտի զարգացման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը հաստատելու մասին», էջ՝ 3-4

Աղյուսակ 2. Արցախի վճարային հաշվեկշռի որոշ ցուցանիշներ, հազար ԱՄՆ դոլար, 2014-2016թթ. [1]

	2014թ.	2015թ.	2016թ.
Ընթացիկ հաշիվ	-137111,2	-112901,6	-94711,0
կրեդիտ	146129,9	157408,9	180418,8
դեբետ	283241,2	270310,5	275129,8
Ապրանքներ	-220982,2	-180665,7	-165873,7
Կրեդիտ	64663,6	62082,1	81106,3
Դեբետ	285645,8	242747,8	246980,0
Ծառայություններ	-2357,3	-1590,3	-5572,6
Կրեդիտ	15032,7	17718,5	15207,1
Դեբետ	17390,1	19308,7	20779,7
Ճանապարհորդություն	-1614,8	-4780,7	-3476,8
Կրեդիտ	2553,7	2941,8	2271,6
Դեբետ	4168,5	7722,6	5748,4

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, Արցախ ժամանած զբոսաշրջիկներից ստացված գումարը 2016թ. կազմել է 2271,6 հազար դոլար, այսինքն 2016թ. Արցախ ժամանած յուրաքանչյուր զբոսաշրջիկ միջինը ծախսել է 163 դոլար (նույն հաշվարկներով 2015թ. մեկ զբոսաշրջիկի միջին ծախսը կազմել է 177,3 դոլար):

Ըստ Արցախի ԱՎԾ տվյալների՝ կացության և հանրային սննդի ծառայությունների ծավալը 2016թ. կազմել է ընդհանուր ծառայությունների 4.6%-ը (2499.3 մլն դրամ), որի 89.3%-ը բաժին է ընկել Ստեփանակերտին, 10.7%-ը՝ Արցախի մյուս շրջաններին[2]: Ըստ Արցախի Էկոնոմիկայի նախարարության տուրիզմի վարչության տվյալների՝ 2016թ. Արցախում գործել է 49 ՀՏՕ՝ 1349 ննջատեղով:

2016թ. Արցախի պետական բյուջեից զբոսաշրջության զարգացման համար տրամադրվել է 20 մլն դրամ, որն ուղղվել է հետևյալ միջոցառումների իրականացմանը՝ ՀՀ-ում տեղի ունեցող միջոցառումներին Արցախի մասնակցության ծախսեր (1.5 մլն դրամ), զբոսաշրջագրավչության օբյեկտները բազմալեզու տեղեկատվական ցուցանակներով ապահովելու ծրագրի մշակում (1 մլն դրամ), զբոսաշրջագրավչության օբյեկտները բազմալեզու տեղեկատվական ցուցանակներով ապահովում (3.7 մլն դրամ), էլեկտրոնային քարոզչություն (300000 դրամ), քարոզչական աշխատանքների իրականացում (միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում, փառատոններում և ֆորումներում մասնակցության ապահովում, տուրիզմի միջազգային օրվա նշում (9 մլն դրամ), փառատոնների կազմակերպում (2 մլն դրամ), նախորդ տարվա պարտքի մարում հրատարակչական աշխատանքների գծով (2.5 մլն դրամ)[3]:

---

[1] ԼՂՀ վճարային հաշվեկշիռ 2014-2015թթ., էջ՝ 22-23, http://stat-nkr.am/files/publications/2016/vcharayin_hash_2015.pdf:
ԼՂՀ վճարային հաշվեկշիռը 2016թ., էջ՝ 18-19, http://stat-nkr.am/files/publications/2017/vcharayin_hashv_2016.pdf:

[2] ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ, էջ՝ 35, 38, http://stat-nkr.am/files/publications/2016/doklad_2016_hunvar_dektember/1_2_6_arevtur&carayutyun%20nor.pdf:

[3] ԼՂՀ Կառավարության 2016թ. մարտի 10-ի N 92-Ա որոշում «ԼՂՀ 2016թ. զբոսաշրջության ոլորտի զարգացման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը հաստատելու մասին», հավելված 2:

Այժմ համառոտ անդրադառնանք Արցախի զբոսաշրջային գրավչություն ունեցող տեսարժան վայրերին, որոնց հիման վրա Արցախում կարող են զարգանալ զբոսաշրջության պատմամշակութային, կրոնական, առողջարանային, ագրո- և էկո-, քաղաքային, սպորտային և արկածային, հնագիտական, և այլ տեսակներ:

Ղարաբաղը բնակեցված է եղել անհիշելի ժամանակներից: Արցախի տարածքի հյուսիսային մասում արևմուտքից արևելք ձգվում է Մռավի լեռնաշղթան, որի ամենաբարձր գագաթը Գոմշասարն է[1]: Հանրապետության արևմտյան մասում՝ հյուսիս-արևմուտք-հարավ-արևելք ուղղությամբ ձգվում է Արցախի (Ղարաբաղի) լեռնաշղթան: Դրա ամենաբարձր գագաթը Կուսանաց լեռն է:

«Հունոտի կիրճ» պետական բնապատմական արգելոցն ունի անանման գեղեցկություն: Ջդրդուզի ամենաբարձր կետից երևում է կիրճի 250մ բարձրությամբ պատերը, որոնք վեր են խոյանում բերդաքաղաք Շուշիի հարավ-արևմտյան մասում գտնվող Կարկառ գետի վրա: Ոտքով կիրճի միջով զբոսնող զբոսաշրջիկները կարող են ականատեսը լինել անանման ջրվեժների, խիտ անտառների, դեռևս քարի դարում բնակելի քարանձավների, Հունոտ գյուղի ավերակներին, հնամենի կամուրջների[2]:

Մամռոտ Քար ջրվեժն ավելի հայտնի է Հովանոց անունով: Սկիզբ առնելով կիրճի ներսից՝ այն թափվում է մամռապատ քարի վրա և հովանոցաձև ջրվեժ ձևավորում: Մամռոտ Քար ջրվեժը գտնվում է Կարկառ գետի ափին՝ բնական լողավազանի մոտ:

Քարանձավ Ավանա Կարանը գտնվում է Շուշիի հարավ-արևմուտքում, որը կոչվում է Ավանի Քերծ: Քարանձավն ունի մոտ 75մ խորություն և մինչև 15մ հասնող լայնություն, իսկ բարձրությունը 7-10մ է: Քարանձավի ուղղահայաց մուտքի մոտ կարելի է տեսնել մարդաշեն հատվածներ, քարե պատեր և այլ կառույցներ[3]:

Ալեքսանա Ղուզե քարանձավը գտնվում է Քարինտակ գյուղի հարավ-արևմուտքում՝ Կարպեն Քերծ սարի ստորոտում՝ Ձառ գետի ձախ ափին: Այս քարանձավն ունի մոտ 50 մ խորություն և շուրջ 7 առանձնացած սրահներ[4]:

Ազոխի քարանձավը գտնվում է Ստեփանակերտից 50 կմ հեռավորության վրա նույնանուն գյուղի մոտ, Հյուսիս – Հարավ մայրուղու վրա: Քարանձավն աշխարհում նախամարդու հայտնի ամենահին կայանատեղերից մեկն է: Այս հուշարձանն ունի բազմաթիվ մուտքեր ու ելքեր, լաբիրինթոսի նմանվող 6 սրահներ, որոնցից ամենամեծը 3000 քառ. մ մակերես է զբաղեցնում: Քարանձավի հարավային մուտքի մոտ 7 մետր խորության վրա հնագետները հայտնաբերել են քարե դարում ապրած նեանդերթալցի նախամարդու ստորին ծնոտի խոշոր կտոր: Դրանից առաջ նեանդերթալցու մնացորդներ են հայտնաբերվել չորս շրջաններում՝ Սիդի Աբդ Երագմենում (Մարոկկո), Շտեյնգեյմում (Գերմանիա), Սպանոկոմբում (Անգլիա) և Սեդիադել Դիաբոլոնում (Իտալիա)[5]:

Թութխունի Տաք ջուրն առողջարանային ավան է Շահումյանի շրջանում: Տաք ջուրը գտնվում է 2200-2400 մ բարձրության վրա, Թարթառ գետի ափին, Քարավաճառից դեպի հարավ: Տաք ջուրը հարուստ է բնական տաք աղբյուրներով,

---

[1] Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 2007, էջ 7-8:
[2] Հունոտի կիրճ. Արցախի գեղեցկուհիներից մեկը, www. hushardzan.am
[3] Ավանա Կարան Քարանձավ, http://artsakhtert.com/arm/society/item/22141-avana-karan-qarandzavy:
[4] Հունոտի կիրճ, http://karabakh.travel/hy/news/sites/hunot-canyon/8/:
[5] Ազոխի քարանձավ, http://findarmenia.org/arm/sights/azokh:

ունի բուժական հատկություններ և բաղադրությամբ նման է Կարլովի Վարի (Չեխիա) և Ջերմուկի հանքային ջրերին: Այն մեկ մետրից ավելի խորությամբ կրային նստվածքներից պատրաստված բնական լողավազան է, որի կենտրոնից ժայթքում է տաք հանքային ջուրը[1]:

Կաչաղակաբերդ ժայռագագաթը գտնվում է Արցախի Պտրեցիկ և Քոլատակ գյուղերի միջև: Լեռան գագաթի վրա կանգնեցված է բերդը: Լեռնագագաթը արևմտյան, հյուսիսային և արևելյան կողմերից շրջապատված է ուղղաձիգ հարթ ժայռերով՝ 50-60 մ բարձրությամբ[2]:

Տատիկ-Պապիկ հուշարձանի իսկական անվանումը «Մենք ենք, մեր սարերն» է: Տեղադրվել է 1967թ., գտնվում է բլրի գագաթին: Այն խորհրդանշում է արցախյան հողի և ժողովրդի արմատների միջև արյունակցական կապը: Հուշարձանն իրենից ներկայացնում է ավանդական տարազով տարեց ղարաբաղցի ամուսինների՝ ուս-ուսի, հպարտ ու անհողդողդ կեցվածքով ու սևեռուն հայացքով[3]:

Քրիստոնեությունն այստեղ է ներթափանցել դեռևս մ.թ. 1-ին դարում: Ղարաբաղում ուխտագնացության հիմնական կենտրոններ են մնում Գանձասարը, որտեղ թաղված է քրիստոնեական աշխարհի գլխավոր սրբություններից մեկի՝ Հովհաննես Մկրտիչի գլուխը, Դադիվանքը, որը կառուցված է Թադևոս Առաքյալի աշակերտներից մեկի՝ Դադիի գերեզմանատեղում, Ամարասի և Եղիշե Առաքյալի վանքերը, կառուցված համապատասխանաբար Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի և Եղիշե Առաքյալի դամբարանների վրա: Ամարասի վանքում թաղված են նաև Սուրբ Զաքարեի և Սուրբ Բարդուղիմեոսի մասունքները[4]: 19-րդ դարի կոթողային կառույցներից է Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին (1868-1887):

Արցախի Հանրապետությունում *զբոսաշրջության զարգացման լուրջ խոչընդոտ է արտերկրի հետ օդային կապի բացակայությունը և Ադրբեջանի հետ ունեցած հակամարտությունը:* ***Զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ են հետևյալ քայլերը՝***

- ակտիվ մարքեթինգային գործունեության շարունակական իրականացում, մասնակցություն զբոսաշրջային ցուցահանդեսներին՝ ՀՀ-ում և արտերկրում,
- զբոսաշրջության առանձին տեսակների զարգացման ծրագրերի մշակում և իրականացում՝ հաշվի առնելով առկա ռեսուրսային ներուժը,
- զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավում,
- զբոսաշրջային ծառայությունների գին-որակ ցուցանիշների բարելավում,
- ոլորտի գիտական կադրերի պատրաստում, աշխատուժի վերապատրաստում՝ միջազգային ստանդարտներին համապատասխան:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Արցախն իր պատմությամբ ու մշակույթով ունի զբոսաշրջության զարգացման մեծ ներուժ: Վերոնշյալ քայլերի իրականացումը կնպաստի զբոսաշրջության զարգացմանը, ինչն իր հերթին բազմարկչի էֆեկտի միջոցով կնպաստի Արցախի տնտեսության զարգացմանը, ինչպես նաև միջազգային ճանաչման մեծացմանը:

---

[1] Քարվաճառ (Նոր Շահումյան), https://karabakh.travel/hy/karvatchar-new-shahumian/32/

[2] Կաղանկատվացի Մ., Պատմություն Աղուանից աշխարհի, Եր., 1969:

[3] Մենք ենք, մեր սարերը, https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A5%D5%B6%D6%84_%D5%A5%D5%B6%D6%84,_%D5%B4%D5%A5%D6%80_%D5%BD%D5%A1%D6%80%D5%A5%D6%80%D5%A8_(%D5%AF%D5%B8%D5%A9%D5%B8%D5%B2)

[4] Կրոնական, https://karabakh.travel/hy/religious/36/

Գայանե Թովմասյան

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Բանալի բառեր՝ *զբոսաշրջություն, վճարային հաշվեկշիռ, զբոսաշրջության տեսակ, զբոսաշրջային վայր*

Հոդվածում քննարկվել է զբոսաշրջության ոլորտի առկա վիճակը Արցախում, ոլորտի պետական քաղաքականության նպատակները և մարքեթինգային քաղաքականությունը, դիտարկվել է վճարային հաշվեկշռի ճանապարհորդություն ենթահաշիվը, որի հիման վրա հաշվարկվել է մեկ զբոսաշրջիկի ծախսած միջին գումարը: Վերլուծվել են զբոսաշրջության հիմնական տեսակների՝ պատմամշակութային, կրոնական, առողջարանային, ագրո- և էկո-, քաղաքային, սպորտային և արկածային, զարգացման նախադրյալները, ռեսուրսային հնարավորությունները, հիմնական զբոսաշրջային վայրերը Արցախում՝ մատնանշելով հիմնական քայլերը՝ զբոսաշրջության զարգացման ուղղությամբ:

Гаяне Товмасян

РАЗВИТИЯ ТУРИЗМА В КАЧЕСТВЕ ГАРАНТИИ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ И МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ

Ключевые слова: *туризм, платежный баланс, вид туризма, назначение туризма*

В статье обсуждается состояние туризма в Арцахе, цели государственной политики в сфере туризма и маркетинговая политика, субиндекс туризма платежного баланса, на основе которой была рассчитана средная сумма расходов одного туриста. Анализируются основные туристические места, предпосылки и ресурсные возможности развития основных видов туризма, таких как историко-культурный, религиозный, оздоровительный, агро- и эко-, урбанистический, спортивный и приключенческий, указывая основные шаги развития туризма в Арцахе.

Gayane Tovmasyan

TOURISM DEVELOPMENT AS A GUARANTEE OF ECONOMIC DEVELOPMENT AND INTERNATIONAL RECOGNITION OF THE REPUBLIC OF ARTSAKH

Keywords: *tourism, balance of payment, type of tourism, tourism destination*

The article discusses the current state of tourism in Artsakh, objectives of the state policy in the sphere and marketing policy, the traveling sub-index of balance of payments, based on which the average amount spent per tourist was calculated. The bases and resource opportunities of development of the main types of tourism, such as historical-cultural, religious, wellness, agro- and eco, urban, sports and adventure, and the main tourism destinations are analyzed, pointing out the main steps of tourism development.